

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգ

Շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հանրային մատչելիության մասին, որով ուժը կորցրած է ճանաչվում Խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգը

Պաշտոնական տեղեկագիր, L 041, 14.02.2003թ., էջեր 0026-0032

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգ
Շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հանրային մատչելիության մասին, որով ուժը կորցրած է ճանաչվում Խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգը

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը(2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (4) և ելնելով Համաձայնեցման կոմիտեի կողմից 2002 թվականի նոյեմբերի 8-ին հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

1) շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հանրային մատչելիության ավելացումը և այդ տեղեկությունների տարածումը նպաստում են բնապահպանական հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, տեսակետների ազատ փոխանակմանը, հանրության ավելի ակտիվ մասնակցությանը բնապահպանական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացին և, հետևաբար, ավելի լավ շրջակա միջավայր ունենալուն,

2) «Շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների մատչելիության ազատության մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 7-ի 90/313/ԵՏՀ հրահանգը (5) խթանեց պետական մարմինների կողմից տեղեկությունների մատչելիության ու թափանցիկության խնդրի նկատմամբ մոտեցման փոփոխության գործընթացը, հանրության կողմից տեղեկությունների մատչելիության իրավունքի կիրառման համար սահմանելով միջոցառումներ, որոնք պետք է ընդլայնվեն և շարունակական լինեն: Սույն Հրահանգով ընդլայնվում է 90/131/ԵՏՀ հրահանգի համաձայն տրված մատչելիության շրջանակը,

3) այդ հրահանգի 8-րդ հոդվածով անդամ պետություններից պահանջվում է ձեռք բերած փորձի մասին հաշվետվություն ներկայացնել Հանձնաժողով, որի համաձայն Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն ներկայացնի՝ հրահանգի վերանայման վերաբերյալ ցանկացած առաջարկի հետ միասին, որը նա անհրաժեշտ է համարում,

4) այդ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն կազմված հաշվետվությամբ նշվում են Հրահանգի գործնական կիրառության ընթացքում բացահայտված կոնկրետ խնդիրները,

5) 1998 թվականի հունիսի 25-ին եվրոպական համայնքը ստորագրեց «Շրջակա միջավայրի հարցերին առնչվող տեղեկությունների մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ/ԵՏՀ կոնվենցիան (Օրհուսի կոնվենցիա): Համայնքի իրավունքի դրույթները պետք է համահունչ լինեն այդ կոնվենցիային՝ եվրոպական համայնքի եզրակացությունն ստանալու նպատակով,

6) առավել բարձր թափանցիկության շահերից ելնելով՝ 90/313/ԵՏՀ հրահանգի փոխարինումն ավելի նպատակահարմար է, քան դրա փոփոխումը, որպեսզի հնարավոր լինի շահագրգիռ կողմերին տրամադրել մեկ, հստակ և ներդաշնակ օրենսդրական փաստաթուղթ,

7) անդամ պետություններում պետական մարմինների կողմից տնօրինվող՝ շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների վերաբերյալ գործող օրենքների միջև առկա հակասությունները կարող են անհավասարություններ առաջացնել Համայնքում՝ կապված այդ տեղեկությունների մատչելիության և մրցակցային պայմանների հետ,

8) անհրաժեշտ է երաշխավորել, որ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ ունենա պետական մարմինների կողմից կամ նրանց համար տնօրինվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հասանելիության իրավունք՝ առանց այդ նպատակով հիմնավորում ներկայացնելու,

9) անհրաժեշտ է նաև, որ պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները լայն հասարակությանը տրամադրեն և տարածեն հնարավորինս լայն մասշտաբներով՝ մասնավորապես տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով: Սույն Հրահանգի մասին հաշվետվություն ներկայացնելիս կամ սույն Հրահանգը վերանայելիս պետք է հաշվի առնել այս տեխնոլոգիաների հետագա զարգացումը,

10) շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների սահմանումը պետք է հստակեցնել այնպես, որ այն ներառի տեղեկություններ՝ ցանկացած ձևով, բնապահպանության իրավիճակի, շրջակա միջավայրի վրա ազդող կամ հնարավոր ազդեցություն ունեցող գործոնների, միջոցառումների կամ գործողությունների, նշված միջոցառումների կամ գործողությունների շրջանակներում կիրառվող ծախսերի ու օգուտների և տնտեսական վերլուծությունների մասին, ինչպես նաև տեղեկություններ մարդու առողջության և անվտանգության, այդ թվում՝ տեղեկություններ սննդի շղթայի աղտոտման, մարդու կյանքի պայմանների, մշակութային վայրերի և կառույցների վերաբերյալ այնքանով, որքանով դրանց վրա ազդում են կամ կարող են ազդել նշված գործոնները,

11) հաշվի առնելով Պայմանագրի 6-րդ հոդվածի սկզբունքը, այն է՝ շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները պետք է ներառվեն Համայնքի քաղաքականությունների և գործողությունների սահմանման ու իրականացման շրջանակներում՝ պետական մարմինների սահմանումը պետք է ընդլայնվի՝ ներառելու համար կառավարության կամ պետական կառավարման այլ մարմինների ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակներում, անկախ դրանց՝ շրջակա միջավայրի համար նախատեսված կոնկրետ պարտավորություններ ունենալու հանգամանքից: Մահմանումը պետք է նաև ընդլայնվի՝ ներառելու համար այլ անձանց կամ մարմինների, որոնք, ազգային օրենսդրության համաձայն, իրականացնում են բնապահպանության հետ կապված պետական կառավարման գործառույթներ, ինչպես նաև դրանց ենթակայության տակ գործող և

բնապահպանության հետ կապված պետական պարտականություններ կամ գործառույթներ ունեցող այլ անձանց կամ մարմինների,

12) պետական մարմինների անունից այլ մարմինների կողմից ֆիզիկապես տնօրինվող՝ շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները նույնպես պետք է ընդգրկվեն սույն Հրահանգի գործողության ոլորտում,

13) շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները դիմողներին պետք է տրամադրվեն հնարավորինս շուտ, ինչամիտ ժամկետային սահմաններում և հաշվի առնելով դիմողների կողմից նշված ժամկետները,

14) պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները պետք է տրամադրեն դիմողների կողմից հայցված ձևով կամ ձևաչափով, եթե այն հանրությանն արդեն մատչելի չի դարձվել այլ ձևով կամ ձևաչափով, կամ եթե նպատակահարմար է տեղեկություններն այլ ձևով կամ ձևաչափով ներկայացնելը: Բացի դրանից՝ պետական մարմիններից պետք է պահանջվի, որ նրանք գործադրեն հնարավոր բոլոր ջանքերը՝ պահպանելու համար իրենց կողմից կամ իրենց համար տնօրինվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններն այն ձևով կամ ձևաչափերով, որոնք հեշտությամբ կարող են վերարտադրվել և մատչելի լինել էլեկտրոնային միջոցներով,

15) անդամ պետությունները պետք է սահմանեն գործնական միջոցներ, որոնցով այդ տեղեկություններն արդյունավետ կերպով մատչելի դարձվեն: Այս միջոցները պետք է երաշխավորեն, որ տեղեկությունները, այդ թվում՝ հանրությանը մատչելի՝ պետական մարմինների ցանկերը և գրանցամատյանները, կամ պետական մարմինների կողմից կամ նրանց համար տնօրինվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները հեռահաղորդակցային ցանցերի միջոցով արդյունավետ և դյուրորեն հասանելի լինեն և աստիճանաբար մատչելի դառնան հանրության համար,

16) տեղեկություններ ստանալու իրավունք՝ նշանակում է, որ տեղեկությունների հրապարակումը պետք է ընդհանուր կանոն լինի, իսկ հատուկ և կոնկրետ սահմանված դեպքերում պետական մարմինները կարող են մերժել շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները տրամադրելու համար իրենց ուղղված հարցումը: Մերժման հիմքերը պետք է մեկնաբանվեն սահմանափակումներով, այնպես, որ հրապարակման արդյունքում պաշտպանվող հանրային շահը հակակշռի մերժման արդյունքում պաշտպանվող շահերին: Մերժման պատճառները սույն Հրահանգով սահմանված ժամկետներում տրամադրվում են դիմողներին,

17) պետական մարմինները պետք է շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները մասամբ տրամադրեն այն դեպքում, երբ հնարավոր է բացառությունների շարքում գտնվող ցանկացած տեղեկություն առանձնացնել հարցվող տեղեկությունների մյուս մասից,

18) պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող ցանկացած տեղեկություն տրամադրելու համար պետք է կարողանան վճարներ սահմանել, սակայն այդ վճարները պետք է ինչամիտ լինեն: Սա նշանակում է, որ վճարները՝ որպես կանոն, չեն կարող գերազանցել տվյալ նյութի պատրաստման համար կատարված փաստացի ծախսերը: Կանխավճար պահանջելու դեպքերը պետք է սահմանափակ լինեն: Հատուկ դեպքերում, երբ պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները մատչելի են դարձնում առևտրային հիմունքներով, կամ երբ դա անհրաժեշտ է նման տեղեկությունների հավաքման ու հրապարակման անընդհատությունն ապահովելու համար, ապա ողջամիտ է համարվում շուկայական գների հիման վրա սահմանված վճարը. այս դեպքում կարող է կանխավճար պահանջվել: Վճարների ցանկը պետք է հրապարակվի և տրամադրվի դիմողներին՝ դրան կցելով տեղեկություն այն

հանգամանքների մասին, որոնց դեպքերում այդ վճարները կարող են գանձվել կամ չկիրառվել,

19) դիմողները պետք է կարողանան օգտվել հարցումների վերաբերյալ պետական մարմնի գործողությունները կամ անգործությունը վարչական կամ դատական կարգով քննության ենթարկելու հնարավորությունից,

20) պետական մարմինները պետք է ձգտեն երաշխավորել, որ իրենց կողմից կամ իրենց անունից կազմվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները լինեն հասկանալի, ճշգրիտ և համեմատելի: Քանի որ սա կարևոր գործոն է՝ տրամադրվող տեղեկությունների որակը գնահատելու համար, ապա պահանջի դեպքում պետք է հրապարակվի նաև տեղեկությունների կազմման եղանակը,

21) բնապահպանական խնդիրների մասին հանրության իրազեկության ավելացման և շրջակա միջավայրի պահպանության բարելավման նպատակով պետական մարմինները, ըստ անհրաժեշտության, մատչելի են դարձնում և տարածում շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները, որը համապատասխանում է իրենց գործառույթներին, մասնավորապես՝ համակարգչային հեռահաղորդակցության և (կամ) էլեկտրոնային տեխնոլոգիաների միջոցով,

22) հաշվի առնելով կիրառման փորձը՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո պետք է անդամ պետությունների կողմից համապատասխան զեկույցները ներկայացվելուց հետո յուրաքանչյուր չորս տարին մեկ գնահատվեն և դրա հիման վրա ենթակա լինեն վերանայման: Հանձնաժողովը պետք է գնահատման զեկույց ներկայացնի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ,

23) քանի որ անդամ պետությունները չեն կարող բավարար չափով ապահովել առաջարկվող Հրահանգի նպատակների իրագործումը, և դրանք առավել արդյունավետ կերպով կարող են ապահովվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել սուբսիդիարության սկզբունքի համաձայն՝ ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածով: Նշված հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Հրահանգով չի սահմանվում ավելին, քան անհրաժեշտ է այդ նպատակներին հասնելու համար,

24) սույն Հրահանգի դրույթները չեն ազդում տեղեկությունների՝ սույն Հրահանգով պահանջվածից ավելի շատ մատչելիություն ապահովելու համար նախատեսված միջոցներ իրականացնելու կամ ներմուծելու՝ անդամ պետությունների իրավունքի վրա,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Նպատակները

Սույն Հրահանգի նպատակներն են՝

ա) երաշխավորել պետական մարմինների կողմից կամ նրանց համար տնօրինվող՝ շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հասանելիության իրավունքը և սահմանել այդ իրավունքների իրականացման ժամկետները, պայմաններն ու գործնական միջոցները.

բ) ապահովել, որ շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները, որպես կանոն, աստիճանաբար մատչելի դարձվեն և տարածվեն հանրության շրջանում, որպեսզի հնարավոր լինի ապահովելու շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների կանոնավոր մատչելիության և հանրության շրջանում տարածման լայն հնարավորությունները: Այս նպատակով հատկապես խրախուսվում է, հնարավորության դեպքում, համակարգչային հեռահաղորդակցության և (կամ) էլեկտրոնային տեխնոլոգիայի օգտագործումը:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով՝

1. «Շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ» նշանակում է գրավոր, տեսողական, լսողական, էլեկտրոնային կամ ցանկացած այլ նյութական ձև ունեցող տեղեկություններ, որոնք վերաբերում են՝

ա) շրջակա միջավայրի տարրերի վիճակին, որոնք, օրինակ՝ օդը և մթնոլորտը, ջուրը, բնահողը, հողը, լանդշաֆտը և բնական օբյեկտներն են՝ ներառյալ ճահճացած հողերը, մերձափնյա և ծովային տարածքները, կենսաբանական բազմազանությունը և դրա բաղադրիչները՝ ներառյալ գենետիկորեն փոփոխված օրգանիզմները և այս տարրերի միջև փոխազդեցությունը.

բ) այնպիսի գործոններին, ինչպիսիք են նյութերը, էներգիան, աղմուկը, ճառագայթումը կամ թափոնները՝ ներառյալ ռադիոակտիվ թափոնները, արտանետումները, արտահոսքերը և այլ արտազատումներ՝ դեպի շրջակա միջավայր, որոնք ազդում են կամ կարող են ազդել (ա)-ում նշված շրջակա միջավայրի տարրերի վրա.

գ) միջոցներին (ներառյալ վարչական միջոցները), ինչպիսիք քաղաքականությունները, օրենսդրությունը, պլանները, ծրագրերը, բնապահպանության մասին համաձայնագրերն են, և այն գործողություններին, որոնք ազդում են կամ կարող են ազդել (ա) և (բ)-ում նշված տարրերի և գործոնների վրա, ինչպես նաև այն միջոցներին կամ գործողություններին, որոնք նախատեսված են այդ տարրերի պաշտպանության համար.

դ) բնապահպանության մասին օրենսդրության իրականացման վերաբերյալ հաշվետվություններին.

ե) ծախսերի և օգուտների, ինչպես նաև տնտեսական մյուս վերլուծություններին ու հաշվարկներին, որոնք կիրառվում են (գ)-ում նշված միջոցների և գործողությունների շրջանակներում.

զ) մարդու առողջության և անվտանգության վիճակին, այդ թվում՝ սննդի շղթայի աղտոտմանը, համապատասխան դեպքերում՝ մարդու կյանքի պայմաններին, մշակութային վայրերին և կառույցներին այնքանով, որքանով դրանք ազդեցության են ենթարկվում կամ կարող են ենթարկվել (ա)-ում նշված շրջակա միջավայրի տարրերի վիճակի կողմից կամ այդ տարրերի միջոցով, կամ (բ)-ում և (գ)-ում նշված գործոններից որևէ մեկի կողմից.

2. «Պետական մարմին» նշանակում է՝

ա) կառավարության կամ պետական կառավարման այլ մարմին՝ ներառյալ պետական խորհրդատվական մարմինները՝ ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակներում.

բ) ֆիզիկական կամ իրավաբանական ցանկացած անձ, որը, ազգային օրենսդրության համաձայն, իրականացնում է պետական կառավարչական գործառույթներ՝ ներառյալ շրջակա միջավայրի հետ կապված կոնկրետ սահմանված պարտականություններ, գործողություններ ու ծառայություններ:

գ) (ա)–ում և (բ)–ում նշված մարմնի կամ անձի ենթակայության տակ գործող ֆիզիկական կամ իրավաբանական ցանկացած անձ, որն ունի շրջակա միջավայրի հետ կապված հանրային պարտականություններ կամ գործառույթներ, կամ տրամադրում է հանրային ծառայություններ:

Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այս սահմանումը չներառի մարմիններին կամ հաստատություններին, երբ դրանք գործում են դատական կամ օրենսդրական իրավասությունների շրջանակներում: Եթե սույն Հրահանգի ընդունման պահին սահմանադրական դրույթները քննության ընթացակարգի մասին դրույթ չեն սահմանում 6–րդ հոդվածի իմաստով, անդամ պետությունները կարող են այդ մարմինները կամ հաստատությունները հանել այդ սահմանման շրջանակներից:

3. «Պետական իշխանությունների կողմից տնօրինվող տեղեկություններ» նշանակում է իրենց տրամադրության տակ գտնվող՝ շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ, որոնք պատրաստել կամ ստացել են այդ մարմինները:

4. «Պետական իշխանությունների համար տնօրինվող տեղեկություններ»՝ նշանակում է շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ, որոնք պետական մարմնի անունից ֆիզիկապես պահվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:

5. «Դիմող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական ցանկացած անձ, որը շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ ստանալու հարցում է ներկայացնում:

6. «Հանրություն» նշանակում է մեկ կամ մի քանի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, ըստ ազգային օրենսդրության կամ պրակտիկայի, նրանց ասոցիացիաները, կազմակերպությունները կամ խմբերը:

Հոդված 3

Հարցման դեպքում շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների մատչելիությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պետական մարմինները պարտավոր լինեն, սույն Հրահանգի դրույթների համաձայն, իրենց կողմից և իրենց համար տնօրինվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից ներկայացրած հարցման դեպքում և առանց նրա կողմից հիմնավորման անհրաժեշտության:

2. Պահպանելով 4–րդ հոդվածի դրույթները և հաշվի առնելով դիմողների կողմից սահմանված ժամանակացույցները՝ շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները տրամադրվում են դիմողին՝

ա) հնարավորինս շուտ կամ 1–ին պարբերությունում նշված պետական մարմնի կողմից դիմողի ներկայացրած հարցումն ստանալուց հետո ամենաուշը մեկ ամսվա ընթացքում:

բ) պետական մարմնի կողմից հարցումն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում, եթե տեղեկությունների ծավալն ու բարդությունն այնպիսին է, որ (ա)–ում նշված մեկամսյա ժամանակահատվածը բավարար չէ: Նման դեպքերում դիմողը հնարավորինս շուտ, և

ամեն դեպքում՝ նախքան նշված մեկամսյա ժամկետի ավարտը, տեղեկացվում է ժամկետի ցանկացած նման երկարաձգման և դրա պատճառների մասին:

3. Եթե հարցումը չափազանց ընդհանուր է ձևակերպված, ապա պետական մարմինները, հնարավորինս շուտ՝ ամենաուշը 2(ա) պարբերությունում նշված ժամանակահատվածում, խնդրում են դիմողին հստակեցնել հարցումը և դիմողին օգնում են այդ հարցում, օրինակ՝ նրան տեղեկություններ տրամադրելով 5(գ) պարբերությունում նշված պետական գրանցամատյաններից օգտվելու մասին: Պետական մարմինները, իրենց կողմից նպատակահարմար համարվող դեպքում, կարող են, 4(1)(գ) հոդվածի համաձայն, մերժել հարցումը:

4. Եթե դիմողը դիմում է պետական մարմին՝ շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները հատուկ ձևով կամ ձևաչափով (նաև որպես պատճեններ) տրամադրելու խնդրանքով, ապա պետական մարմինները տեղեկությունները տրամադրում են այդպիսով, եթե՝

ա) այն արդեն հանրությանը մատչելի չէ այլ ձևով կամ ձևաչափով՝ մասնավորապես 7-րդ հոդվածում սահմանված ձևով կամ ձևաչափով, որից դիմողները կարող են հեշտությամբ օգտվել:

բ) պետական մարմինները ողջամիտ են համարում այդ տեղեկություններն այլ ձևով կամ ձևաչափով ներկայացնելը, ինչի դեպքում ներկայացվում են այդ ձևի կամ ձևաչափի ընտրության պատճառները:

Սույն պարբերության նպատակով՝ պետական մարմինները գործադրում են հնարավոր բոլոր ջանքերը՝ պահպանելու համար իրենց կողմից և իրենց համար տնօրինվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների ձևերն ու ձևաչափերը, որոնք հեշտությամբ կարող են վերարտադրվել և մատչելի լինել համակարգչային հեռահաղորդակցության միջոցներով և էլեկտրոնային այլ միջոցներով:

Տեղեկությունները՝ ամբողջությամբ կամ մասամբ հայցված ձևով կամ ձևաչափով տրամադրելը մերժելու պատճառները 2(ա) պարբերությամբ սահմանված ժամկետում ներկայացվում են դիմողներին :

5. Սույն հոդվածի նպատակներով՝ անդամ պետություններն ապահովում են, որ՝

ա) պաշտոնատար անձանցից պահանջվի աջակցել հանրությանը տեղեկություններից օգտվելու հարցում.

բ) պետական մարմինների ցանկերը հանրորեն մատչելի լինեն .

գ) սահմանվեն շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ ստանալու իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովող գործնական միջոցներ , որոնք են օրինակ՝

- տեղեկատվական հարցերով աշխատողների նշանակումը.

- պահանջվող տեղեկությունների ուսումնասիրության համար նախատեսված կառույցների ստեղծումը և պահպանումը.

- պետական մարմինների կամ տեղեկատվական կենտրոնների կողմից շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների վերաբերյալ գրանցամատյանները կամ ցանկերը՝ հստակ նշելով, թե որտեղ կարելի է գտնել այդ տեղեկությունները:

Անդամ պետություններն ապահովում են, որ պետական մարմինները հանրությանը համապատասխան կերպով տեղեկացնեն սույն Հրահանգի արդյունքում ծագող իրենց

իրավունքների մասին և այդ նպատակով տրամադրեն բավարար չափով տեղեկություններ, ցուցումներ և խորհրդատվություն:

Հոդված 4

Բացառությունները

1. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ ստանալու համար ներկայացված հարցումը մերժվի, եթե՝

ա) պահանջվող տեղեկությունները չեն տնօրինվում այն պետական մարմնի կողմից կամ նրա համար, որին հասցեագրված է հարցումը: Նման դեպքում, եթե պետական մարմինը տեղյակ է, որ պահանջվող տեղեկությունները տնօրինվում են մեկ այլ պետական մարմնի կողմից կամ նրա համար, ապա այն հնարավորինս շուտ իրեն ներկայացված հարցումը փոխանցում է այդ պետական մարմնին և, համապատասխանաբար, այդ մասին տեղեկացնում դիմողին կամ դիմողին տեղեկացնում է այն պետական մարմնի մասին, որին՝ ըստ նրա, հնարավոր է դիմել՝ պահանջվող տեղեկություններն ստանալու համար.

բ) հարցումն ակնհայտորեն ողջամիտ չէ.

գ) հարցումը չափազանց ընդհանուր է ձևակերպված՝ հաշվի առնելով 3(3) հոդվածը.

դ) հարցումը վերաբերում է ամփոփման փուլում գտնվող նյութերին, անավարտ փաստաթղթերին կամ տվյալներին.

ե) հարցումը վերաբերում է ներքին հաղորդակցություններին՝ հաշվի առնելով հանրային այն շահը, ի նպաստ որի հրապարակվում է տեղեկությունը:

Եթե հարցումը մերժվում է այն պատճառով, որ վերաբերում է ամփոփման փուլում գտնվող նյութերին, պետական մարմինները նշում են այն մարմնի անունը, որը պատրաստում է այդ նյութը և նյութն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ մոտավոր ժամանակահատվածը:

2. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ ստանալու համար ներկայացված հարցումը մերժվի, եթե տեղեկությունների հրապարակումը վնասում է՝

ա) պետական մարմինների գործունեության գաղտնիությանը, եթե այդ գաղտնիությունը նախատեսվում է օրենքով.

բ) միջազգային հարաբերություններին, պետական անվտանգությանը կամ ազգային պաշտպանությանը.

գ) արդարադատության իրականացմանը, ցանկացած անձի՝ արդար դատավարություն ստանալու հնարավորությանը, կամ պետական մարմնի կողմից քրեական կամ կարգապահական բնույթ ունեցող հարցում իրականացնելու հնարավորությանը.

դ) առևտրային կամ արդյունաբերական տեղեկությունների գաղտնիությանը, եթե այդ գաղտնիությունը նախատեսվում է օրինական տնտեսական շահերը, այդ թվում՝ վիճակագրական տեղեկությունները և հարկային գաղտնիքը պահպանելու, հանրային շահերը պաշտպանելու նպատակ ունեցող ազգային կամ Համայնքի իրավունքով, .

ե) մտավոր սեփականության իրավունքներին.

զ) անձնական տվյալների և (կամ) ֆիզիկական անձին վերաբերող նյութերի գաղտնիությանը, եթե տվյալ անձը համաձայնություն չի տվել այդ տեղեկությունները հանրությանը տրամադրելու համար, եթե այդ գաղտնիությունը նախատեսվում է ազգային կամ Համայնքի իրավունքով:

է) հայցվող տեղեկությունները կամավոր հիմունքներով տրամադրած ցանկացած անձի շահերին կամ պաշտպանությանը, ում վրա նման իրավական պարտավորություն դրված չի կամ չի կարող դրվել, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձը համաձայն է եղել նշված տեղեկությունների հրապարակմանը:

ը) շրջակա միջավայրի, ինչպես օրինակ՝ հազվագյուտ տեսակների գտնվելու վայրերի պաշտպանությանը, որին վերաբերում են տեղեկությունները:

1-ին և 2-րդ պարբերությունների մեջ նշված մերժման հիմքերը մեկնաբանվում են սահմանափակումներով՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով այն հանրային շահը, ի նպաստ որի իրականացվում է տեղեկությունների հրապարակումը: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հրապարակման արդյունքում պաշտպանվող հանրային շահը պետք է հակակշռի մերժման հետևանքով պաշտպանվող շահերին: Անդամ պետությունները, 2(ա), (դ), (զ), (է) և (ը) հոդվածի ուժով, չեն կարող նախատեսել, որ ներկայացված հարցումը մերժվի, եթե հարցումը վերաբերում է դեպի շրջակա միջավայր արտանետումների մասին տեղեկություններին:

Այս շրջանակներում և (զ) ենթապարբերության կիրառման նպատակով անդամ պետություններն ապահովում են, որ պահպանվեն «Անձնական տվյալների մշակման և այդ տվյալների ազատ տեղաշարժի մասով անհատների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգի պահանջները(6):

3. Եթե անդամ պետությունը բացառություններ է նախատեսում, այն կարող է կազմել չափանիշների հանրորեն մատչելի մի ցուցակ, որի հիման վրա համապատասխան մարմինը կարող է որոշել, թե ինչ ընթացք տա հարցումներին:

4. Պետական մարմինների կողմից կամ նրանց համար տնօրինվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները, որոնք ստանալու համար դիմողը հարցում է ներկայացրել, տրամադրվում է մասամբ, եթե հնարավոր է հարցվող տեղեկությունն առանձնացնել 1(դ) և (է) պարբերությամբ կամ 2-րդ պարբերությամբ սահմանված տեղեկություններից:

5. Տեղեկությունները լիովին կամ մասամբ տրամադրելու հարցումը մերժելու մասին դիմողին տեղեկացնում են գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով, եթե հարցումը ներկայացվել է գրավոր կամ եթե այդպես է ցանկանում դիմողը, 3(2)(ա) հոդվածում կամ կոնկրետ դեպքում՝ (բ)-ում նշված ժամկետում: Ծանուցման մեջ պետք է ներկայացվեն մերժման հիմնավորումները և 6-րդ հոդվածով նախատեսված քննության ընթացակարգի վերաբերյալ տեղեկություններ ընդգրկվեն :

Հոդված 5

Վճարները

1. 3(5) հոդվածում նշված կարգով կազմված և վարվող պետական ցանկացած գրանցամատյանների կամ ցանկերի մատչելիությունը և հարցվող տեղեկությունների՝ տեղում իրականացվող ուսումնասիրությունն անվճար է:

2. Պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններ տրամադրելու համար կարող են վճարներ սահմանել, սակայն այդ վճարները չպետք է գերազանցեն ողջամիտ գումարի չափը:

3. Եթե սահմանվում են վճարներ, պետական մարմինները հրապարակում և դիմողներին են տրամադրում այդ վճարների ցանկը և տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնց դեպքում այդ վճարները կարող են գանձվել կամ չկիրառվել:

Հոդված 6

Արդարադատության մատչելիությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ցանկացած դիմող, ով կարծում է, որ տեղեկություններ ստանալու իր հարցումն անտեսվել է, անօրինականորեն մերժվել է (ամբողջությամբ կամ մասամբ), հարցմանը տրվել է ոչ բավարար պատասխան կամ որևէ այլ կերպ ընթացք չի տրվել՝ համաձայն 3-րդ, 4-րդ կամ 5-րդ հոդվածների դրույթների, հնարավորություն ունենա օգտվելու այն ընթացակարգից, որով տվյալ պետական մարմնի գործողությունները կամ անգործությունը կարող են վերանայվել այդ կամ այլ պետական մարմնի կողմից կամ օրենքով սահմանված անկախ և անկողմնակալ մարմնի կողմից վարչական կարգով քննության ենթարկվել: Ցանկացած նման ընթացակարգ պետք է լինի արագացված և (կամ) անվճար, կամ ոչ թանկ:

2. 1-ին պարբերությունում նշված քննության ընթացակարգից բացի՝ անդամ պետություններն ապահովում են, որ դիմողը հնարավորություն ունենա ապահովվելու, որ քննությունն անցկացվի ընդհանուր իրավասության դատարանում կամ օրենքով սահմանված այլ անկախ և անկողմնակալ մարմնում, որը կարող է քննության ենթարկել պետական մարմնի գործողությունները կամ անգործությունը, և որի որոշումները կարող են վերջնական դառնալ: Ավելին, անդամ պետությունները կարող են նախատեսել, որ դատարան դիմելու հնարավորություն ունենան նաև երրորդ անձինք, եթե հրապարակված տեղեկությունները հիմք են՝ նրանց դեմ մեղադրանք ներկայացնելու համար:

3. 2-րդ պարբերությունում նշված վերջնական որոշումները պարտադիր են տեղեկությունները տնօրինող պետական մարմնի համար: Մերժման պատճառները պետք է ներկայացվեն գրավոր, առնվազն այն դեպքերում, երբ տեղեկությունների տրամադրումը մերժվում է՝ սույն հոդվածի համաձայն:

Հոդված 7

Շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների տարածումը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ պետական մարմինները՝ իրենց գործառնություններին համապատասխան, համակարգեն իրենց կողմից կամ իրենց համար տնօրինվող շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունները՝ նպատակ ունենալով ապահովել տեղեկությունների օպերատիվ և կանոնավոր տարածումը հանրության շրջանում, հատկապես՝ հնարավորության դեպքում, համակարգչային հեռահաղորդակցության և (կամ) էլեկտրոնային տեխնոլոգիաների միջոցով:

Համակարգչային հեռահաղորդակցության և (կամ) էլեկտրոնային տեխնոլոգիաների միջոցով մատչելի դարձված տեղեկությունները կարող են չներառել այնպիսի

տեղեկություններ, որոնք հավաքվել են՝ նախքան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը, էթե այն արդեն էլեկտրոնային տարբերակով հասանելի չէ:

Անդամ պետություններն ապահովում են, որ շրջակա միջավայրին առնչվող տեղեկություններն աստիճանաբար մատչելի դառնան տվյալների էլեկտրոնային շտեմարաններում, որոնք հանրությանը հասանելի են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջոցով:

2. Հրապարակման և տարածման ենթակա տեղեկություններն, ըստ անհրաժեշտության, պետք է թարմացվեն և պարունակեն առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) բնապահպանությանը կամ դրան առնչվող հարցերին վերաբերող միջազգային, ինչպես նաև Համայնքի, պայմանագրերի, կոնվենցիաների կամ համաձայնագրերի, ազգային, տարածաշրջանային կամ տեղական օրենսդրության տեքստերը.

բ) բնապահպանության վերաբերյալ քաղաքականությունները, նախագծերը և ծրագրերը.

գ) ընթացիկ զեկույցներ՝ (ա)-ում և (բ)-ում նշված փաստաթղթերի իրականացման վերաբերյալ, էթե դրանք կազմվում կամ էլեկտրոնային տարբերակով տնօրինվում են պետական մարմինների կողմից.

դ) 3-րդ պարբերությունում նշված՝ բնապահպանական իրավիճակի մասին հաշվետվությունները.

ե) շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող կամ ազդելու հավանականություն ունեցող գործողությունների դիտանցման արդյունքում ստացված տվյալները կամ տվյալների վերաբերյալ ամփոփագրերը.

զ) շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունեցող թույլտվությունները և բնապահպանության վերաբերյալ համաձայնագրերը կամ նշումն այն մասին, թե որտեղ կարելի է գտնել նման տեղեկություններ կամ դրանք ստանալու համար որտեղ հարցում ներկայացնել՝ 3-րդ հոդվածի շրջանակներում.

է) շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունները և շրջակա միջավայրի 2(1)(ա) հոդվածում նշված տարրերի մասով ռիսկի գնահատումները, կամ նշումն այն մասին, թե որտեղ կարելի է գտնել նման տեղեկություններ կամ դրանք ստանալու համար որտեղ հարցում ներկայացնել 3-րդ հոդվածի շրջանակներում:

3. Առանց հակասելու Համայնքի օրենսդրությամբ նախատեսված՝ հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ հատուկ պարտավորություններին, անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ շրջակա միջավայրի վիճակի մասին ազգային, անհրաժեշտության դեպքում՝ նաև տարածաշրջանային կամ տեղական զեկույցները հրապարակվեն չորս տարուց ոչ ավելի ժամկետով պարբերականությամբ. այդ զեկույցները ներառում են տեղեկություններ շրջակա միջավայրի որակի և դրա վրա բացասական ազդեցությունների մասին:

4. Առանց հակասելու Համայնքի օրենսդրությամբ նախատեսված՝ հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ հատուկ պարտավորություններին, անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող ուղղակի վտանգի դեպքում, անկախ դրա՝ մարդկային գործունեության կամ բնական պատճառների արդյունք լինելու հանգամանքից, անմիջապես և առանց հապաղելու տարածվի պետական մարմինների կողմից կամ նրանց համար տնօրինվող ողջ տեղեկատվությունը, որը կարող է վտանգի հնարավոր ազդեցությանը ենթակա հանրությանը հնարավորություն տալ ձեռնարկելու

անհրաժեշտ միջոցներ՝ վտանգից առաջացող վնասները կանխելու կամ դրանց ազդեցությունը մեղմացնելու համար:

5. 4(1) և (2) հոդվածում նշված բացառությունները կարող են կիրառվել սույն հոդվածով սահմանված պարտականությունների նկատմամբ:

6. Անդամ պետությունները կարող են բավարարել սույն հոդվածի պահանջները՝ ստեղծելով հղումներ Համացանցային այն կայքերին, որտեղ կարելի է գտնել համապատասխան տեղեկությունները:

Հոդված 8

Շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների որակը

1. Անդամ պետություններն իրենց իրավասության սահմաններում ապահովում են, որ իրենց կողմից կամ իրենց անունից կազմված տեղեկությունները լինեն թարմացված, ճշգրիտ և համեմատելի:

2. Հարցման դեպքում պետական մարմինները պատասխանում են տեղեկություններ ստանալու համար ներկայացված հարցումներին՝ համաձայն 2(1)(բ) հոդվածի, դիմողին տեղեկացնելով, թե որտեղ՝ առկայության դեպքում, կարելի է տեղեկություններ գտնել չափման ընթացակարգերի, այդ թվում՝ լաբորատոր հետազոտությունների, նմուշառման և փորձանմուշների նախնական մշակման մեթոդների մասին, որոնք օգտագործվել են տեղեկությունների հավաքման ժամանակ կամ տեղեկություններ, որոնք վերաբերում են կիրառվող ստանդարտացված ընթացակարգերին:

Հոդված 9

Քննության ընթացակարգը

1. Ոչ ուշ, քան 2009 թվականի փետրվարի 14-ը, անդամ պետությունները հաշվետվություն են ներկայացնում սույն Հրահանգի կիրառման արդյունքում ձեռք բերած փորձի մասին:

Նրանք այս հաշվետվությունը տրամադրում են Հանձնաժողովին ոչ ուշ, քան 2009 թվականի օգոստոսի 14-ը:

Ոչ ուշ, քան 2004 թվականի փետրվարի 14-ը, Հանձնաժողովը անդամ պետություններ է ուղարկում ուղեցուցային փաստաթուղթ, հստակ նշելով այն կարգը, որով ակնկալում է, որ անդամ պետությունները ներկայացնեն հաշվետվությունը:

2. Հաշվի առնելով ձեռք բերված փորձը և համակարգչային հեռահաղորդակցության և (կամ) էլեկտրոնային տեխնոլոգիաների ոլորտում զարգացումները՝ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ զեկույց է ներկայացնում՝ դրան կցելով վերանայման մասին ցանկացած առաջարկ, որն անհրաժեշտ է համարում:

Հոդված 10

Կիրարկումը

Անդամ պետությունները սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը գործողության մեջ են դնում ոչ ուշ, քան 2005

թվականի փետրվարի 14-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 11

Ուժը կորցրած ճանաչելը

Սույնով 90/313/ԵՏՀ հրահանգը ուժը կորցրած է ճանաչվում 2005 թվականի փետրվարի 14-ից:

Ուժը կորցրած ճանաչված հրահանգին արված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին արված հղումներ և ընթերցվում հավելվածով սահմանված համեմատական աղյուսակի համաձայն:

Հոդված 12

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակման օրը:

Հոդված 13

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի հունվարի 28-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

նախագահ Պ. Քոքս

Խորհրդի կողմից՝

նախագահ Գ. Պապանդրեու

1) ՊՏ C 337 E, 28.11.2000թ., էջ 156 և ՊՏ C 240 E, 28.08.2001թ., էջ 289:

2) ՊՏ C 116, 20.04.2001թ., էջ 43:

3) ՊՏ C 148, 18.05.2001թ., էջ 9:

4) Եվրոպական պառլամենտի 2001 թվականի մարտի 14-ի եզրակացություն (ՊՏ C 343, 05.12.2001թ., էջ 165), Խորհրդի 2002 թվականի հունվարի 28-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 113 E, 14.05.2002թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2002 թվականի մայիսի 30-ի որոշում (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում): Խորհրդի 2002 թվականի

դեկտեմբերի 16-ի որոշում և Եվրոպական պառլամենտի 2002 թվականի դեկտեմբերի 18-ի որոշում:

5) ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ 56:

6) ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ

Հրահանգ 90/313/ԵՏՀ	Սույն Հրահանգը
Հոդված 1	Հոդված 1(ա) Հոդված 1 (բ)
Հոդված 2(ա) Հոդված 2(բ) — — — —	Հոդված 2(1) Հոդված 2(2) Հոդված 2(3) Հոդված 2(4) Հոդված 2(5) Հոդված 2(6)
Հոդված 3(1) Հոդված 3(2) Հոդված 3(3) Հոդված 3(4) — — —	Հոդված 3(1) և Հոդված 3(5) Հոդված 4(2) և Հոդված 4(4) Հոդված 4(1)(բ), (գ), (դ) և (ե) Հոդված 3(2) և Հոդված 4(5) Հոդված 4(1)(ա) Հոդված 3(3) Հոդված 3(4)
Հոդված 4 —	Հոդված 6(1) և Հոդված 6(2) Հոդված 6(3)
Հոդված 5 — —	Հոդված 5(1) Հոդված 5(2) Հոդված 5(3)
Հոդված 6	Հոդված 2(2)(գ), Հոդված 3(1)
Հոդված 7 — — —	Հոդված 7(1), (2), և (3) Հոդված 7(4) Հոդված 7(5) Հոդված 7(6)
—	Հոդված 8
Հոդված 8	Հոդված 9
Հոդված 9	Հոդված 10
Հոդված 10	Հոդված 13
—	Հոդված 11
—	Հոդված 12